

3871



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

« 02 » 04 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 092 - 25

Նախաձեռնող՝

«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ
Քաղաք Վայք, Երկրաբանների փ. 7

Գործունեությունը՝

Տաթև համայնքի Շինուհայր բնակավայրի դպրոցի կառուցում
Սյունիքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 092 - 25

«02» ապրիլ 2025թ.

**Սյունիքի մարզի Տաթև համայնքի Շինուհայր բնակավայրի դպրոցի կառուցման
շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության կատեգորիա՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Սյունիքի մարզ, Տաթև համայնք, Շինուհայր բնակավայր

Ներածական մաս. «ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնահատման հաշվետվությամբ նախատեսվում է Սյունիքի մարզի Տաթև համայնքի Շինուհայր բնակավայրում 432 աշակերտի համար դպրոցի կառուցում:

Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 1.65 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է քաղաքաշինության կոմիտեի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ կառուցապատման ենթական հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 1.65 հա: Հողատարձքը ծանրաբեռնված է հին դպրոցի՝ 4694.97 քմ, կաթսայատան՝ 35.83 քմ, ջրավազան՝ 207.3 քմ, տնտեսական՝ 71.97 քմ շենքերով, որոնք նախատեսվում է ապամոնտաժել: Ընդհանուր ապամոնտաժվելու է 5010.37 քմ շինություններ:

Գոյություն ունեցող դպրոցի առջևի մուտքի հատվածում առկա է հարակից վարչական ղեկավարի նստավայրը մոտ 70 մ՝ հեռավորության վրա, ճանապարհը գտնվում է 80մ հեռավորության վրա: Գոյություն ունեցող դպրոցի տարածքն ունի 2 մուտք և մեկ ելք, 2 մուտքը գլխավոր փողոցի կողմից է, հսկ էլքը՝ ետնամասից: Այն գտնվում է բնակելի թաղամասի մեջ, մոտակա բնակելի տան հեռավորությունը կազմում է 12 մ: Գոյություն ունեցող դպրոցում առկա է սեպտիկ հոր, սակայն նոր դպրոցի կառուցումից հետո կոյուղին կմիացվի համայնքի կոյուղագծին, որը գտնվում է դպրոցից 70 մ հեռավորության վրա:



Շին. մոնտաժային աշխատանքները կատարվելու են պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Կառուցապատման ենթակա տարածքից պահպանված են, հեռավորությունը կարմիր գծից և հարևան հողակտորներից:

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման նպատակով տեղամասում իրականացվել է ինժեներաերկրաբանական պայմանների ուսումնասիրություններ:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Որոտան գետի ձախ կողմում՝ սարավանդի վրա, ծովի մակարդակից մոտ 1500 մետր բարձրության վրա:

Շրջանի և տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ժամանակակից գետա-լճային առաջացումները, ներկայացված ավազակավերով, կոպճա-գլաքարային գրունտներով և հրաբխային խարամով:

Ստորգետնյա ջրեր տեղամասում փորված հորատանցքերով մինչև 8.0 մետր խորության վրա չեն հայտնաբերվել:

Տարածքի կլիման բարեխառն լեռնային է՝ մեղմ ձյունապատ ծմեռներով, տաք ամառներով: Տարեկան միջին ջերմաստիճանը 2.2°C է, օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝ 36.2°C , բացարձակ նվազագույնը՝ -34.4°C :

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- ընդհանուր հողատարածքի մակերեսը՝ 16000 քմ,
- կառուցապատման մակերեսը՝ 3700 քմ,
- կանաչապատման գոտու մակերեսը՝ 7903 քմ,
- ճանապարհներ՝ 2650 քմ,
- սավաճքներ-սալապատ տարածքներ՝ 1250 քմ,
- ռետինե ծածկույթ՝ 800 քմ,
- ավազային ծածկույթ՝ 200 քմ:

Համաձայն նախագծի դպրոցը նախատեսվում է կառուցել 432 աշակերտի համար: Դպրոցը երկհարկանի է առկա է նաև նկուղային հարկ, որը ծառայելու է նաև որպես ժամանակավոր թաքստոց-ապաստարան: Նախատեսվում է 2 փակ ներքին բակ՝ ապակե ծածկի տակ լրացուցիչ ռեկրեացիոն գոտիներին լուսավորություն ապահովելու համար: Առաջին հարկում տեղակայված են 1-ից մինչև 5-րդ դասարանների երկուական լսարաններ, նախադպրոցական դասարան, գրադարան ու համակարգչային տեխնիկայի կաբինետ, ռազմագիտության կաբինետ, ուսուցչանոց-մեթոդկաբինետ, տնօրենի և փոխտնօրենի աշխատասենյակներ, ֆիզիկայի մասնագիտացված լսարան՝ իրեն կից մասնագիտացված լաբորատորիայով, հանդիսությունների դահլիճն իրեն սպասարկող սենյակների խմբով, 4 սանհանգույցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ:

Դպրոցն ունի $36.6\text{մ} \times 91.5\text{մ}$ առանցքային չափեր և սեյսմիկ կարով բաժանված է 2 հավասար մասնաշենքերի: Միջնորմները նախատեսված են $200 \times 400 \times 200$ թեթև բետոնի բլոկներից, համապատասխան ամրանավորմամբ: Միջանցքների առանցքային չափը կազմում է 3.5մ ՝ որոշ տեղամասերի լայնացումներով: Դասասենյակներն ունեն $7\text{մ} \times 7\text{մ}$ առանցքային չափեր, իսկ դրանց միջին մակերեսը կազմում է 48մ^2 : Առաջին հարկի բարձրությունը հատակից հատակ կազմում է 3.3մ : Երկրորդ հակի բարձրությունը փոփոխական է՝ ստորին մասում կազմում է 3.0մ ծածկի տակ: Սպորտային դահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ կազմում է 7.8մ , իսկ հանդիսությունների դահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ կազմում է 4.5մ :



Դպրոցի բակային տարածքի բարեկարգման աշխատանքների շրջանակում նախատեսվում է բաց մարզադաշտ, բաց մարզահրապարակ, վազքուղի, ճանապարհներ և հարթակներ:

Մուտքային գոտուն կից տեղակայված են հաշմանդամների համար նախատեսված ուղղահայաց ամբարձիչ: Կենտրոնական մուտքի աջ կողմում նախատեսված է ցայտաղբյուր:

Նախագծով նախատեսվում է 127.6 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում՝ շինության տանիքին: ՖՎ վահանակները տեղակայվելու են տանիքին՝ տանիքի ուղղությանը զուգահեռ 19° հորիզոնական թեքությամբ: Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է 232 հատ միաբյուրեղային 144 (6x24) կեսբջիջներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային վահանակներից, որոնք բաժանված են 16 ՖՎ խմբի՝ 8 խումբ յուրաքանչյուր փոխակերպիչի համար:

Դպրոցի տարածքում պահպանված են հակահրդեհային միջոցառումների համար անհրաժեշտ պայմանները:

Կրթահամալիրի կառուցման համար իրականացվել են ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության համակարգերի ինժեներական լուծումները, որոնք իրականացվելու են ՀՀ շինարարական նորմերի համաձայն:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար, դպրոցում ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

Քանդման աշխատանքներով նախատեսվում է՝

- ներքին քանդման աշխատանքների ժամանակ տեսակավորել բոլոր վերադարձվող նյութերը,

- քանդման աշխատանքներին զուգահեռ կազմակերպվելու է շինարարական աղբի կանոնավոր տեղափոխում, իսկ մինչև տեղափոխումն այն պահվելու է կառուցապատման տարածքում՝ ծածկված անթափանց թաղանթներով կամ փակ տարաների (կոնտեյներներ, պարկեր և այլն) մեջ:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ շինարարական աշխատանքները տևելու են 24 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ աշտարակային կռունկ, բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, տոփանիչ, էքսկավատոր, ավտոբետոնատար և այլն:

Ապամոնտաժման աշխատանքները կատարվելու են ձեռքով, բահերով և տեխնիկայով՝ մի քանի փուլերով: Քանդման արդյունքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ՝ մոտ 3683 մ³ շինաղբի տեսքով, փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող՝ 11880 մ³ քանակով, որից 6780 մ³ իրականացվելու է հետլիցք, մանացած մասը հեռացվելու է համայնքապետարանի կողմից հատկացված տարածք, ինչպես նաև շինարարական տարբեր նյութեր՝ փայտ, պատուհաններ, մետաղական մասեր, քար և այլն: Քանդման արդյունքում առաջացող թափոնները տարանջատվելու և կուտակվելու են առանձին:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Շինարարական նյութերից օգտագործվելու են բետոն, քար, ամրան ավազ, ապակի, ջերմամեկուսիչ նյութեր և այլն: Առաքումն իրականացվելու է պարբերականությամբ, որը կապահովի աշխատանքների անընդհատությունը:



Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար խմելու կենցաղային ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի:

Շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը և այլն, կազմակերպվելու են բացառապես շինարարության տարածքի սահմաններում:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ: 7903 քմ մակերեսով տարածքում իրականացվելու է սիզամարգ, տնկվելու են նոր ծառեր, թփեր, իսկ տարածքում առկա ծառերը պահպանվելու են:

Կանաչապատման համար անհրաժեշտ բուսահողի ձեռք բերումն իրականացվելու է ՀՀ-ում գործող օրենսդրությամբ:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Ինչը ներառում է՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում,
- աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ,
- սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրության թաղանթով,
- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում փակ ծածկով մեքենաներով,
- հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց տեխնիկական նորմալ վիճակի շահագործման ապահովում,
- շինհրապարակում քանդման և շինարարության ընթացքում թափոնների տարանջատում
- տնկված ծառերի և բույսաձածկի խնամք,



- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների պահպանում և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան հատկացնել 850 ՀՀ հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 1200 ՀՀ հազ. դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ Սյունիքի մարզի Տաթև համայնքի Շինուհայր բնակավայրի դպրոցը կառուցվելու և շահագործվելու է գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Սյունիքի մարզպետարանը, Տաթևի համայնքապետարանը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրամշակում, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Սյունիքի մարզի Տաթև համայնքի Շինուհայր բնակավայրում իրականացվել են հանրային լուծումներ: Հանրային լուծման անցել է լարված մթնոլորտում բնակիչներից համաձայն չէին դպրոցի տարածքում առկա շինությունները քանդելուն և տեղում նոր դպրոց կառուցելուն, առաջարկում էին բնակավայրում այլ տարածք հատկացնել նոր դպրոց կառուցելու համար, իսկ նշված դպրոցը թողնել որպես հանդսությունների տուն:

Կառուցապատող ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ ներկա դպրոցի շենքերը վթարային են և պիտանի չեն այլ նպատակով օգտագործման համար:

Հանրային լուծումներից հետո, համայնքի ավագանին կայացրել է ևս մեկ ավագանու նիստ՝ և տվել իր համաձայնությունը՝ գոյություն ունեցող դպրոցի տեղում նոր դպրոցի կառուցման վերաբերյալ:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում լանջաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ակնկալվում են ուսումնական և աշխատանքային պայմանների բարելավում, դպրոցի հարակից տարածքի բարեկարգում՝ խթանելով նաև առողջ ապրելակերպի զարգացմանը՝ ի հաշիվ բարեկարգ և ժամանակակից բացօթյա մարզահրապարակների, բարեկարգված և կանաչապատված տարածքի կայուն օգտագործում և պահպանություն:

Նախատեսվող գործունեությունը հնարավորություն կտա դպրոցի ուսուցիչներին և աշակերտներին իրենց աշխատանքային ու ուսումնական գործընթացները կազմակերպել և անցկացնել առավել անվտանգ, բարեկարգ և հաճելի միջավայրում:



Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը: Ինչպես նաև պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:

- Քանի որ կառուցապատման աշխատանքներն իրականացվելու են գործող դպրոցի տարածքում, խստագույնս հետևել անվտանգության կանոններին և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ դպրոցականների մուտքը շինհրապարակ բացառելու նպատակով:

- Նախատեսվող շինարարական աշխատանքները կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Տաթևի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

- Շինարարական հրապարակում շինարարական աշխատանքների կազմակերպման և անվտանգության ապահովման համար առաջնորդվել քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի մարտի 5-ի N07-Ն հրամանով հաստատված «Շինարարական հրապարակում շինարարական աշխատանքների կազմակերպման և անվտանգության ապահովման ուղեցույցը»-ի պահանջներով:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Տաթև համայնքի Շինուհայր բնակավայրի դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Արմինե Վարդանյան